ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3733-Ա «30» սեպտեմբերի 2024 թ.

«ԵՐԵՎԱՆԻ Հ. 181 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշման հավելվածի 2-րդ կետը՝

1. «Երևանի հ. 181 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար հայտարարել մրցույթ:

2. Հանձնարարել.

1) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մարդկային ռեսուրսների կառավարման վարչությանը՝ ապահովել. «Երևանի հ. 181 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարության հրապարակումը՝ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային http://www.azdarar.am կայքում, ինչպես նաև համապատասխան հայտարարության մասին իրազեկել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը՝ նախարարության պաշտոնական կայքում հրապարակելու համար:

2) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի լրատվության վարչությանը՝ ապահովել սույն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում նշված հայտարարության հրապարակումը՝ Երևանի քաղաքապետարանի պաշտոնական համացանցային կայքում (www.yerevan.am):

3. Որոշման կատարման հսկողությունը վերապահել Երևանի քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ